



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՅԱՆՈՒՄԻ ԱՐԵՄՍՏԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆԻ ՅԱՐԿԻՆ ՏԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԻՊԱՏՈՍԱՐԱՆԸ ՄԵՐ ՏՈՒՆՆ Է, ԻՆՉՊԵՍ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ՀԱՍՏԱՏԵՑ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այս հիւպատոսարանը մեր տունն է, ինչպես որ մեր տունն են եկեղեցին ու Հայաստանը, մեր մշակոյթը, յայտարարեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Չորեքշաբթի, 12 Հոկտեմբերի կեսօրին, Լոս Անճելըսի Հայաստանի հիւպատոսարանը այցելութեան առիթով: Ան շեշտեց, որ հայութիւնը, ուր որ ալ գտնուի, նոյն միացեալ ընտանիքին անդամն է, կը պատկանի նոյն ու մէկ ազգին, որուն հանդէպ պարտի նախանձախնդիր ըլլալ, իրաւունքներուն համազօր պարտաւորութիւններ զգալ:

Վեհափառ Հայրապետը Լոս Անճելըսի շրջանին մէջ հայրենի հողը ներկայացնող հիւպատոսարանը հասաւ կեսօրուան ժամը 12:30ին, ընկերակցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ ժողովականութեան ներկայացուցիչներուն, եւ դիմաւորուեցաւ գլխաւոր հիւպատոս Տիար Գրիգոր Յովհաննիսեանի, անձնակազմին եւ բազմատասնեակ հիւրերու կողմէ: Գլխաւոր հիւպատոսը ճաշի հիւրընկալութիւն մը կազմակերպած էր »Հայկական Տան« մէջ: Մասնակիցներուն շարքին էին Լիբանանի հիւպատոսուհի Տիկին Մատնա Աուն Ղազալ, «House of Lebanon»ի ներկայացուցիչներ, Մեծի Տանն Կիլիկոյ միաբանութեան անդամներ, Թեմիս հոգեւորականաց դասու ներկայացուցիչներ, Հայ Աւետ. եկեղեցիներու միութեան հովիւ Վեր. Յովսէփ Մաթոսեան, Հայ Կաթողիկէ համայնքի ժողովրդապետ Հոգ. Տ. Գրիգոր Վրդ. Շահինեան, Ազգ. Կեդրոնական վարչութեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի նախկին անդամներէն Տիար Վիգէն Յովսէփեան, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչները, Թեմիս Ազգ. Վարչութեան ու գործակից յանձնախումբերու ներկայացուցիչներ, ազգային բարերարներ ու գործիչներ:

Հիւպատոսարան մուտքին, Վեհափառը կատարեց տնօրինեքի արարողութիւն եւ աղ ու հացի օրհնութիւն:

Գլխաւոր հիւպատոսը՝ Տիար Գ. Յովհաննիսեան իր ու անձնակազմին անունով արտասանեց ողջոյնի խօսք եւ առաջարկեց խմել Վեհափառ

Չայրապետին կենացը: Ան սկատել տուաւ, որ Վեհափառ Չայրապետը կարելոր ու իւրայատուկ անձնաւորութիւն է ոչ միայն մեր ժողովուրդի կեանքին մէջ, այլ նաեւ միջ-եկեղեցական բեմին վրայ: Ան այս այցելութեան առիթով Վեհափառ Չայրապետին նուիրեց Անիի Ս. Աստուածածին պատմական եկեղեցւոյ մէկ մանրակերտը:

Գլխաւոր հիւպատոսը հրաւիրեց Առաջնորդ Սրբազանը, որպէսզի արտասանէ իր խօսքն ու ներկայացնէ Վեհափառը: Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան խօսք ուղղեց գլխաւոր հիւպատոսին ու անձնակազմին՝ հիւրընկալութեան համար: Ան յայտնեց, թէ նոր հիւպատոսարան իր առաջին այցելութիւնը տուած էր բացման առիթով, իսկ այսօր, երկրորդ այցելութեան, կ'ընկերանայ Վեհափառ Չայրապետին, որ հովուապետական այցելութեամբ մը կը պատուէ մեր թեմը: Ան հրաւիրեց Վեհափառը՝ արտասանելու իր խօսքը:

Վեհափառ Չայրապետը գնահատանքով արտայայտուեցաւ հիւպատոսին ու անձնակազմին հայրենանուէր աշխատանքին մասին ու վեր առաւ հայութեան տունը ըլլալու հիւպատոսարանին հանգամանքը: Ան նաեւ ընդգծեց, որ Չայաստանը հայութեան անցեալն ու պատմութիւնն է, մեր ներկան է ու ապագան: «Չայաստանը պահած է մեզ, իսկ մեր պարտականութիւնն է պահել ու պահպանել Չայաստանը: Սփիւռքն ու Ղարաբաղը կը կազմեն Չայաստանի շարունակութիւնը, ու հայութիւնը պարտի երաշխաւորել այս բոլորին գոյատեւումը», ըսաւ Վեհափառ Չայրապետը:

Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ նաեւ հայութեան ազգային պահանջատիրութեան: Ան յիշատակեց, թէ Չայաստանի նախագահը Յեղասպանութեան 100ամեակին ոգեկոչման համար կազմած է յանձնախումբ մը. «Մենք հարիւրամեակը պիտի չնշենք միայն խունկ ու մոմով, աղօթքով ու պարզապէս յիշելով, այլ պիտի ըլլանք պահանջատեր, պիտի հետապնդենք մեր ազգային անտեսուած իրաւունքները, որոնք անժամանցելի են», շեշտեց Վեհափառ Չայրապետը, նշելով, որ հայութիւնը, Էջմիածինէն մինչեւ Անթիլիաս ու Լոս Աճճելըսէն մինչեւ աշխարհի չորս ծագերը պիտի դառնայ մէկ բռունցք, պիտի մնայ պահանջատերը իր դատին ու պիտի շարունակէ հետապնդել իր արդար իրաւունքները: Ան յիշեցուց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, անցեալին ու այսօր, ոչ միայն խօսքով, այլ նաեւ գործով կանգնած է մեր իրաւունքներու հետապնդման յառաջապահի դիրքերուն վրայ, կը գործէ ի խնդիր հայութեան ու Չայաստանին:

Վեհափառ Չայրապետը յուշանուէր մը՝ գեղանկար մը ունէր գլխաւոր հիւպատոսին: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, Ազգային Առաջնորդարանին կողմէ գեղեցիկ գորգ մը իբրեւ յուշանուէր յանձնեց հիւրընկալ գլխաւոր հիւպատոսին:

Չանդիպումը վերջ գտաւ Վեհափառ Չայրապետին »Պահպանիչ« ուով:

**HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS NEW
HEADQUARTERS OF THE ARMENIAN CONSULATE GENERAL**

"This Consulate is our home, just as the Church and Armenia is our home", stated His Holiness Catholicos Aram I during a visit to the new headquarters of the Armenian Consulate General in Glendale on Wednesday, October 12, 2011.

His Holiness arrived at the Consulate General accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Clergy and Councils members. Upon their arrival, His Holiness and entourage were welcomed by Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannissian, and Consular staff.

The Consulate General had organized a reception in honor of His Holiness, with the participation of acting Consul General of Lebanon the Honorable Madonna Aoun Ghazal, representatives from the "House of Lebanon", Rev. Joe Matossian, Minister of the Armenian Evangelical Union of North America, Very Rev. Fr. Krikor Chahinian, Rector of the Armenian Catholic Church, former ARF Bureau member Dr. Viken Hovsepian, ARF Central Committee members, Central Executive and Executive Council members, community leaders, sponsors, and friends.

At the entrance of the Consulate General, His Holiness conducted the Blessing of the Home ceremony and the traditional blessing of salt and bread.

In his welcoming remarks, Consul General Hovhannissian stated that His Holiness is an important figure not just for Armenians but also in the international arena, and presented His Holiness with a painting of the historic St. Mary's Church of Ani. He then invited the Prelate to deliver his remarks and to introduce His Holiness. The Prelate first thanked the Consulate General and Consular staff for their warm welcome and reception. He stated that his first visit to the new headquarters was just recently at the official opening, and expressed joy that this second visit took place during the Pontifical Visit of His Holiness to our Prelacy. His Holiness was then invited to deliver his message.

His Holiness commended the Consul General and Consular staff for their service to our homeland and spoke of the role of the Consulate General as the home of Armenians. Stating that Armenia is our history, our past, our present, and our future, His Holiness added that Armenia has sustained us and it is our responsibility to sustain it. The Diaspora and Artsakh is an extension of Armenia, and every Armenian has an obligations to serve for the splendor of these nations and communities. His Holiness also reflected on the Armenian Cause, saying that we will commemorate the 100th anniversary of the Genocide not just with prayers but by demanding the rights of our people, and that the Catholicosate of Cilicia has been and will remain on the forefront of pursuing the Armenian Cause.

His Holiness presented the Consul General with a beautiful painting, and the Prelate also presented him with a carpet on behalf of the Prelacy.

The reception came to a close with the benediction by His Holiness.